**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար <Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի (ԻԿՀ) վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 գնման պայմանագրում 2021 թվականի ապրիլի 9-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ N1 | ՀՀ կառավարության 25.03.2021թ N415-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 կետ: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

## 12.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 գնման պայմանագրի

ք. Երևան <<09>> 04 2021թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Է. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.03.2021թ N 415-Ն որոշումը և <<Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի (ԻԿՀ) վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 12.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին հաստատել 2021 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027548
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխվյան փ.7/11
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500348005680
ՀՎՀՀ 00891484

Տնօրեն՝

_____________ Է. Մարտիրոսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված*
*12.11.2019թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 գնման պայմանագրի*
*<<09>> 04 2021թ. կնքված N 3 համաձայնագրի*

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

**<<Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի (ԻԿՀ) վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների**

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | 2019թ. վճարված գումարը | 2020թ. վճարված գումարը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/30 | <<Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի (ԻԿՀ) վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ | 6 975 000 | - | - | - | - | - | 20 925 000 | 20 925 000 | 20 925 000 | 20 925 000 | 20 925 000 | 20 925 000 | 20 925 000 | 20 925 000 | 20 925 000 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027548
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար
_________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<ՁԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխյան փ.7/11
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500348005680
ՀՎՀՀ 00891484
Տնօրեն՝
_________ Է. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.